Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2023 թ. որոշմամբ
«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Տերյան 74
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00460
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2005-02-24
1.5 ՀՎՀՀ-ն		02577018
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94255525
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://icare.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		info@icare.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արթուր Գրիգորյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	29	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ԳԻԴՄԱՍՏԵՐ Գինու զբոսավարների վերապատրաստման ծրագիր	13,213,836
	Հայաստանում խոտածածկ տարածքների չափի, վիճակի և կենսազանգվածի քարտեզագրում նախագիծ	38,927,944

	Հայաստանի Պետական Ագրարային Համալսարան, Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր	3,813,295
	SDO USAID ARMENIA, Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր	397,508,763
	Մանդառության և առողջ սննդի կիռարման գնահատումը Երևանի ընտրված մանկապարտեզներում	12,940,000
	Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման ծրագիր(FRUITENIA)	54,575,300
	Հայաստանի Պետական Ագրարային Համալսարան,Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման ծրագիր(FRUITENIA)	7,509,269
	ԱԳՐՈ-հետազոտությունների իրականացում Հայաստանում	1,315,626
	Կանաչ և օրգանական ագրոտեխնոլոգիաները ջերմոցային տնտեսության կառավարման մեջ դասընթացների կազմակերպում	7,536,000
	Հողի և կենսաբազմազանության հետազոտություն	11,179,200
	Հանրապետության գյուղատնտեսական գոտիների և ոռոգման գոտիների բնութագրերի և ագրոտեխնիկական հիմնական ցուցանիշների կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմաների ուսումնասիրության նպատակով ելակետային տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	53,125,200
	Տեխասի գյուղատնտեսական փորձարկումների կայան, նվիրատվություն	82,005,400
	Հայաստանում խոտածածկ տարածքների չափի, վիճակի և կենսազանգվածի քարտեզագրում նախագիծ	8,913,329
	Ուսանողական գինեգործարանի հիմնում	11,411,978
	Սևծովյան տարածաշրջանի, որպես գինու զբոսաշրջության ուղղության խթանում «Գինու ծով» BSB-1034 ծրագիր	101,652,031
	Գործողության Անդրսահմանային դաշինք հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի և կանաչ գյուղատնտեսության BSB-1135 ծրագիր	15,353,428
	ագրոբիզնեսի/ֆերմերների վերապատրաստում և բիզնես պլանների մշակման աջակցություն	11,323,512
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Գինու ֆիլտր պոմպով կոմպլեկտով	4,380,997
	Ֆիլտր կարտոնային 40x40 cm	104,276
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Զաբել Եսայանի արձան	20,000,000
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ԳԻԴՄԱՍՏԵՐ Գինու զբոսավարների վերապատրաստման ծրագիր	18,281,261	
Հայաստանում խոտածածկ տարածքների չափի, վիճակի և կենսազանգվածի քարտեզագրում նախագիծ	22,448,475	
Հողի և կենսաբազմազանության հետազոտություն	12,319,357	
Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման ծրագիր(FRUITENIA)	101,752,923	
Հալաստանում հողերի սեփականության և հողատարածքների ուսումնասիրության իրականացում	41,566,342	
Սևծովյան տարածաշրջանի, որպես գինու զբոսաշրջության ուղղության խթանում «Գինու ծով» BSB-1034 ծրագիր	99,718,905	
Գործողության Անդրսահմանային դաշինք հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի և կանաչ գյուղատնտեսության BSB-1135 ծրագիր	16,528,225	
SDO USAID ARMENIA Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր	415,359,737	
Հայաստանի Պետական Ագրարային Համալսարան Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր	13,554,927	
Ուսանողական գինեգործարանի հիմնում	15,906,679	

Հանրապետության գյուղատնտեսական գոտիների և ոռոգման գոտիների բնութագրերի և ագրոտեխնիկական հիմնական ցուցանիշների կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմաների ուսումնասիրության նպատակով էլեկտրային տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	46,591,736
Սննդառության և առողջ սննդի կիռարման գնահատումը Երևանի ընտրված մանկապարտեզներում	11,594,291
ագորբիզնեսի/ֆերմերների վերապատրաստում և բիզնես պլանների մշակման աջակցություն	8,083,805
Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն	3,413,825
Ֆինանսական աջակցություն ուսանողներին ուսման վարձի մասով	530,000
EVN-Երևանի գինու ակադեմիա	18,560,155
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,302,458,886
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	846,210,643

Նշումներ՝

Հիմնադրամի ֆինասնական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը կցված են մեկ PDF ֆայլով: Հաշվետվության 12-րդ և 13-րդ կետերի միջև տարբերությունը պայմանավորված է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության, վարչական ծախսերի, ինչպես նաև հիմնական միջոցների ձեռքբերման ու վերանորոգման ծախսերով:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 33 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by BALANYAN HAYK 3509710107
Date: 2023.06.30 18:41:46 AMT

«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....6

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....7

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....8

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....9

2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որը ներառում է 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամի 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներին) համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, դադարեցնել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումներ կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև.

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, այդ ռիսկերին արձագանքելու նպատակով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված այնպիսի դեպքերի կամ հանգամանքների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա

դեպքերը կամ հանգամանքները կարող են պատճառ հանդիսանալ, որ Հիմնադրամը դադարեցնի անընդատության հիմունքի կիրառումը, և այդպիսով այլևս չհամարվի անընդհատ գործող:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու դեպքերն այնպես, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացած աուդիտի իրականացման պատասխանատու ղեկավարն է՝

Տարոն Վարազդատյան

Տնօրեն

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ

ՀՀ, 0009, ք. Երևան, Արովյան փ. 41շ., թի[illegible]

30 հունիսի 2023թ.

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ»
"KMG CONSULTING"
"КЕЙЭМДЖИ КОНСАЛТИНГ"
02647331

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	659,922	262,923
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		874	2,912
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**660,796**	**265,835**
Պաշարներ	7	50,563	13,502
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ	8, 12	121,217	103,555
Շահութահարկի գծով ակտիվ		-	169
Դրամական միջոցներ	9	136,223	565,781
Գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվներ	12	-	2,248
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**308,003**	**685,255**
Ընդամենը ակտիվներ		**968,799**	**951,090**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ		660,779	661,765
Ընդամենը սեփական կապիտալ		**660,779**	**661,765**
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	149,329	94,087
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**149,329**	**94,087**
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	124,508	158,249
Գնորդների հետ պայմանագրերի գծով պարտավորություն (ստացված կանխավճարներ)	12	7,067	5,572
Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ	11	23,304	31,417
Շահութահարկի գծով պարտավորություն		3,812	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**158,691**	**195,238**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**968,799**	**951,090**

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

30 հունիսի 2023թ.

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթ.	2022թ.	2021թ.
Գնորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	12	148,555	133,265
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	10	550,634	462,667
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	10	36,126	27,001
Նվիրաբերությունից եկամուտ	13	117,789	484,979
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր		(196,732)	(217,771)
Այլ աշխատանքի (քաղաքացիաիրավական բնույթի) վարձատրություն		(252,774)	(228,249)
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն		(51,795)	(39,723)
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	14	(106,318)	-
Տրված ենթադրամաշնորհների գծով ծախսեր	15	(70,421)	-
Գրասենյակային և այլ վարչական ծախսեր	16	(26,369)	(32,308)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(26,567)	(27,281)
Վառելիք և տրանսպորտային այլ ծախսեր		(13,579)	(15,745)
Ուսանողների կեցության վճարներ և այլ օժանդակություն		(500)	(220)
Այլ ծախսեր	17	(56,995)	(108,427)
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտ		373	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ կորուստ		(45,701)	(19,714)
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**5,726**	**418,474**
Շահութահարկի գծով ծախս	18	(6,712)	(2,992)
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**(986)**	**415,482**

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

30 հունիսի 2023թ.

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2021թ.	**246,283**	**246,283**
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	415,482	415,482
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	**661,765**	**661,765**

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2022թ.	**661,765**	**661,765**
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(986)	(986)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	**660,779**	**660,779**

Տնօրեն
Արթուր Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ
Հայկ Բալանյան

30 հունիսի 2023թ.

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FOUNDATION
02577018

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհներից մուտքեր	600,737	446,729
Նվիրաբերություններից մուտքեր	82,005	484,979
Գնորդների հետ պայմանագրերի գծով մուտքեր	185,145	133,171
Այլ մուտքեր	348	-
Պաշարների ձեռքբերման գծով ելքեր	(178,312)	(38,628)
Ստացված ծառայությունների և աշխատանքների (ներառյալ՝ քաղաքացիաիրավական բնույթի) գծով ելքեր	(332,747)	(361,749)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(196,750)	(203,044)
Գործուղումների գծով ելքեր	(4,107)	(2,788)
Ուսանողների կեցության վճարումներ և այլ օժանդակություն	(500)	(220)
Տրված ենթադրամաշնորհներ	(64,191)	-
Վճարված հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(35,868)	(20,987)
Վճարված շահութահարկ	(2,731)	(5,152)
Այլ վճարումներ	(18,367)	(4,854)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**34,662**	**427,457**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(419,536)	(132,791)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(419,536)**	**(132,791)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(384,874)**	**294,666**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(44,684)	(19,120)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**565,781**	**290,235**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**136,223**	**565,781**

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FOUNDATION
02577018

30 հունիսի 2023թ.

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

ա) Հիմնադրամի մասին

«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է հիմնադիր՝ Տեխասի գյուղատնտեսական փորձարկումների կայանի որոշմամբ և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով ու իրավական այլ ակտերով և իր կանոնադրությամբ: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2005 թվականի փետրվարի 24-ին:

Հիմնադրամը կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է բարեգործական, սոցիալական, գիտական, կրթական, բնապահպանական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամն իր գործունեությունը սկսել է 2005 թվականի հունիս ամսվանից:

Հիմնադրամի նպատակներն են՝ իրականացնել բարեգործական, աջակցության, զարգացման, ուսուցման ծրագրեր՝ գյուղատնտեսական, սոցիալական, գիտական, բնապահպանական, կրթական և այլ ոլորտներում:

Հիմնադրամն իր նպատակներին համապատասխան կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

- ✓ Հետազոտությունների իրականացում, խորհրդատվություն և ենթակառույցներ զարգացնող նախագծերի մշակում գյուղատնտեսության և կրթության ոլորտներում,
- ✓ Երկարաժամկետ և կարճաժամկետ վճարովի կրթագիտական ծրագրերի, վերապատրաստումների և վարպետաց դասերի կազմակերպում և իրականացում,
- ✓ Նախնական և մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթության ծառայություններ, նեղ մասնագիտական գիտելիքների ուսուցման կազմակերպում և կրթության բնագավառի այլ օժանդակ գործունեություն,
- ✓ Խաղողագործություն, պտղաբուծություն, մրգի և բանջարեղենի վերամշակում, ջերմատների կառավարում և բաց դաշտի բանջարաբուծություն,
- ✓ Գինեգործություն, գինու որակի ապահովման ծառայություններ, գինու լաբորատոր փորձաքննությունների իրականացում
- ✓ Ագրոտուրիզմի և էկոտուրիզմի կազմակերպում և դրանց առնչվող ծառայությունների մատուցում:

Հիմնադրամի

Լրիվ անվանումը՝	«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամ
Պետական գրանցման համարը՝	222.160.00460
Պետական գրանցման ամսաթիվը՝	24.02.2005թ.
Գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝	ՀՀ, 2413, Կոտայքի մարզ, համայնք Պռոշյան, 5-րդ փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 1 բնակելի տուն
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	02577018

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ)
- Հիմնադրամի տնօրենը

Խորհուրդը Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինն է:

Խորհուրդը բաղկացած է 3 անդամից, որի կազմը հետևյալն է.

- Ջոն Նիքըլս - Խորհրդի նախագահ
- Արմեն Ասատրյան - Խորհրդի անդամ
- Ալեքսան Շանոյան - Խորհրդի անդամ

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի հունիսի 3-ի որոշմամբ հաստատված և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 10-ին գրանցված կանոնադրության փոփոխությունների համաձայն՝ Խորհրդի քանակական կազմը փոփոխվել և սահմանվել է 5 հոգի: Հաշվետու ժամանակաշրջանի վերջին դրությամբ Խորհրդի նոր անդամներ չեն համալրվել, և համալրման գործընթացը պլանավորվում է իրականացնել 2023 թվականի ընթացքում:

Հիմնադրամի աշխատակիցների թվաքանակն առ 31.12.2022թ. կազմել է 24 հոգի (31.12.2021թ.՝ 29 հոգի):

31 դեկտեմբերի 2022 թվականի դրությամբ Հիմնադրամին է պատկանում «ՎԻԿՈՄ ՎԱՅՆ ԼԱԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցված՝ 14.02.2019թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, պետական գրանցման համարը՝ 273.110.1058588, ՀՎՀՀ՝ 02692014) բաժնեմաս(եր)ի 60%-ը, սակայն Հիմնադրամի կողմից վերոնշյալ ընկերության կանոնադրական կապիտալը ֆինասնական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ չի համալրվել, իսկ Հիմնադրամն այդ ընկերության հիմնադրման օրվանից սկսված փաստացի որևէ ակտիվ գործունեություն չի իրականացրել: Հիմնադրամը նախատեսում է լուծարել նշված ընկերությունը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1 Հայտարարություն համապատասխանության մասին

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հրապարակած և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

2.2 Չափման հիմունքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

2.3 Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Ստորագրումը

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023 թվականի հունիսի 30-ին Հիմնադրամի տնօրեն Արթուր Գրիգորյանի և Հիմնադրամի գլխավոր հաշվապահ Հայկ Բալանյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Շնորհներ և նվիրատվություններ

Պետական շնորհները Հիմնադրամին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու միջազգային կազմակերպությունների) կողմից տրամադրվող օգնություն են՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Այլ՝ մասնավոր և/կամ ոչ պետական հաստատություններից (կառույցներից), բարեգործական կազմակերպություններից ստացված շնորհները համանմանության սկզբունքով հաշվառվում են ինչպես պետական շնորհները: Սակայն, եթե ստացված միջոցներին (ռեսուրսներին) կից՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի, կոնկրետ պայմաններ առկա չեն (օրինակ՝ տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ապա միջոցների այդպիսի ստացումը չի դիտվում որպես պետական շնորհ, այլ դիտվում և հաշվառվում է որպես նվիրաբերություն կամ նվիրատվություն՝ կախված այլ համապատասխան հանգամանքներից:

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները, և որ շնորհները ստացվելու են:

i. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները նրանք են, որոնց հիմնական պայմանն այն է, որ Հիմնադրամը գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ: Դրանք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով, իսկ նման արժեքի բացակայության դեպքում՝ գնահատված իրական արժեքով և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներին զուգընթաց:

ii. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք չեն դասակարգվում որպես ակտիվներին վերաբերող, համարվում են եկամուտներին վերաբերող: Դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

iii. Նվիրատվություններ և նվիրաբերություններ

Նվիրատվությունները և առանց կոնկրետ պայմանների տրված նվիրաբերությունները որպես եկամուտ են ճանաչվում դրանց ստացման պահին:

3.2 Գնորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամի սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է՝ ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով: Հասույթ չի համարվում պետական շնորհներից և նվիրատվություններից և/կամ նվիրաբերություններից ստացված եկամուտը:

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը Հիմնադրամը ճանաչում է, երբ բավարարվում են կատարման պարտականությունները: Կատարման պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստումներ (հանձնառություններ) են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ կամ աշխատանքներ գնորդին: Կախված կատարման պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կա՛մ ժամանակ ինչ-որ մի (կոնկրետ որոշվող) պահի, կա՛մ էլ ժամանակի ընթացքում:

Հիմնադրամի սովորական գործունեության հասույթ բերող հիմնական ուղղությունները, դրանց գծով կատարման պարտականությունները և հասույթների ճանաչման քաղաքականությունը նկարագրված են Ծնթ. 12-ում:

Այնքանով, որքանով Հիմնադրամի կողմից կատարմանը համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Հիմնադրամը ճանաչում է «պայմանագրի գծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարմանը համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է առևտրական դեբիտորական պարտքերի կազմում:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը:

3.3 Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ

բ) բիզնեսի միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք նույն կամ տարբեր ժամանակաշրջանում ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Հիմնադրամն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Հիմնադրամի եկամուտների գերակշիռ մասն անհատույց ստացված ակտիվներ են և/կամ շնորհային միջոցներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ շահութահարկով հարկման ենթակա չեն, իսկ դրանց հաշվին կամ գծով կատարված ծախսերը՝ նվազեցման ենթակա չեն: Այդ և մի շարք այլ նկատառումներով ընթացիկ և նախորդ ժամանակաշրջաններում Հիմնադրամի կողմից հետաձգված հարկեր չեն ճանաչվել:

3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը, որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ներառվող ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով

հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ» ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

➢ Շենքեր և շինություններ	20 տարի
➢ Կառուցվածքներ	8-10 տարի
➢ Մեքենաներ և սարքավորումներ	1-8 տարի
➢ Տրանսպորտային միջոցներ	5-8 տարի
➢ Արտադրական և տնտեսական գույք	1-8 տարի
➢ Կտավներ	20 տարի
➢ Այլ հիմնական միջոցներ	1-10 տարի
➢ Բազմամյա տնկարկներ	8 տարի

3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի մշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները, բացի գերնորմատիվային և ժամանակաշրջանի ծախսերից:

Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.6 Արտարժութային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
Դրամով	2022թ.	2021թ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
1 ԱՄՆ դոլար	435.87	503.81	393.57	480.14
1 Եվրո	461.03	596.65	420.06	542.61

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.8 Ֆինանսական գործիքներ

i. Սկզբնական ճանաչումը և չափումը

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները:

ii. Ապաճանաչումը

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորու-

թյան մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

iii. *Հետագա չափումը*

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրած և ստացած փոխառությունները, ավանդները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը սովորաբար չափվում են անվանական գումարով: Ցպահանջ պարտավորությունները չափվում են այն գումարով, որով ենթակա են մարման պահանջը ներկայացվելու դեպքում:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

iv. *Արժեզրկում*

Բոլոր ֆինանսական ակտիվների (բացի «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգվածներից) և պայմանագրերի գծով ակտիվների համար Հիմնադրամը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) պահուստ՝ այդ ակտիվների սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Սկզբնական ճանաչման ժամանակ ԱՊԿ պահուստը չափվում է 12-ամսյա ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: Եթե սկզբնական ճանաչումից հետո որևէ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, ապա այդ ֆինանսական ակտիվի գծով ԱՊԿ պահուստը չափվում է մինչև մարումը մնացած ամբողջ ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: ԱՊԿ-ն պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատականն է: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների (այսինքն՝ գործիքի պայմաններին համաձայն Հիմնադրամին հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերությունը, որոնք Հիմնադրամն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված ֆինանսական ակտիվի արդյունքային տոկոսադրույքով: ԱՊԿ պահուստը և դրա հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: ԱՊԿ պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է որպես համապատասխան ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի նվազեցում:

3.9 *Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը՝ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի

փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամը ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որն ակնկալվում է, որ կպահանջվի այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլում այն ռիսկերը, որոնց գծով ապագա դրամական հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.11 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

i. աշխատավարձը,
ii. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին են վճարովի տարեկան հասանելիք արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության ու մայրության նպաստը,
iii. բժշկական (առողջության) ապահովագրության գումարները,
iv. պարգևավճարները և այլ հավելումները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված աշխատանքի դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Հիմնադրամը այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները կատարում են աշխատանք, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Հիմնադրամն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Հիմնադրամը պարգևավճարների և այլ հավելումների գծով ակնկալվող ծախսումը ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Հիմնադրամի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1 *Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների օգտակար ծառայության ժամկետ*

Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում՝ հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսին են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացածությունը (մաշվածությունը), հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Հիմնադրամը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2 *Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք առկա են ակտիվների հնարավոր արժեզրկվածության (այսինքն՝ փոխհատուցվող գումարը հաշվեկշռային արժեքից պակաս լինելու) հայտանիշներ: Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և ակտիվի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից առավելագույնը: Նման հայտանիշների առկայության դեպքում իրականացվում է փաստացի արժեզրկումից կորստի հաշվարկ: Արժեզրկված ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն ժամանակաշրջանում, որում նվազումը տեղի է

ունեցել: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, նախկինում ճանաչված արժեզրկումն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

4.3 Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Հիմնադրամը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- 1-ին մակարդակ. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող),
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտարկելի են կա՛մ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կա՛մ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող),
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումը՝ որպես մեկ ամբողջություն, դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները Հիմնադրամը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

4.4 Ֆինանսական ակտիվների և գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք առկա են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի և գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների հնարավոր արժեզրկվածության հայտանիշներ: Հիմնադրամը կիրառում է դատողություն, մասնավորապես դեբիտորական պարտքերի և գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների հնարավոր արժեզրկվածության մեծության որոշման նպատակով: Արժեզրկվածության մեծության որոշման ժամանակ Հիմնադրամը հաշվի է առնում դեբիտորական պարտքերի ապահովվածությունը, դեբիտորների ֆինանսական կայունությունն ու գործարար համբավը, դեբիտորների ընդգրկվածության աշխարհագրական գոտու (երկրի, քաղաքի, շրջանի ֆինանսական ու տնտեսական պայմանները), դեբիտորների հետ ձևավորված գործարար ու այլ իրավապայմանագրային հարաբերությունները և այլ վերաբերելի հանգամանքներ, իսկ գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների արժեզրկվածության որոշման ժամանակ՝ յուրաքանչյուր պայմանագրի գծով գնորդին փոխանցված արդյունքի դիմաց հատուցման ստացման (կամ ստացված հատուցման մարման) անվերապահ իրավունքի վաստակմանն ուղղված իր առաջընթացը և պայմանագրային այլ գործոնները: Նկատի ունենալով վերը նշվածը՝ Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսական ակտիվների և գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների գծով արժեզրկումը գնահատել է որպես ոչ էական, և

այդ իսկ պատճառով արժեզրկման պահուստ չի ճանաչվել:

4.5 Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանությունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Հիմնադրամի հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավարության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ հարկային մարմինների կողմից չառաջադրվեն լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և իրավասու դատարանի կամ այդ հարցերի գծով այլ որևէ պատասխանատու մարմնի որոշումների վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը: Տույժերի, տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

5.1 Նոր կամ փոփոխված ստանդարտներ

Ստորև ներկայացված են նոր կամ փոփոխված ստանդարտների այն ցանկը, որոնք Հիմնադրամի ղեկավարության գնահատմամբ նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա.

- «COVID-19» համավարակի հետ կապված զիջումներ վարձակալության գծով 2021 թվականի հունիսի 30-ից հետո ընկած ժանամանակաշրջանների համար (փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում),
- Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (փոփոխություններ ՀՀՄՍ 37-ում),
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում),
- Ապահովագրության պայմանագրեր (փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում),
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներ (փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում),
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում):

5.2 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ

Հրապարակված, սակայն ֆինանսական հաշվետվություններին վերաբերող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս չկիրառվող նոր ստանդարտները բերված են ստորև.

- *Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ. փոփոխություններ «Շահութահարկեր» ՀՀՄՍ 12-ում.*

  Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և շահագործումից հանելու պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և շահագործումից հանելու պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Բոլոր մյուս գործարքների համար

փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

- *Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ. փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ում.*

Փոփոխությունների համաձայն, եթե Հիմնադրամը իրավունք ունի երկարաձգել պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը 12 ամիս, ապա այն դասակարգվում է որպես ոչ ընթացիկ՝ անկախ այդ իրավունքն օգտագործելու մտադրությունից:

Կատարվել է նաև հետագա պարզաբանում այն մասին, որ եթե պարտավորության մարման ժամկետը կախված է Հիմնադրամի կողմից որևէ կովենանտի բավարարման փաստից, ապա պարտավորության դասակարգման նպատակով հաշվի են առնվում միայն այն կովենանտները, որոնց Հիմնադրամը պետք է բավարարեր հաշվետու ամսաթվի դրությամբ: Անհրաժեշտ է կատարել նաև կովենանտների վերաբերյալ ռիսկերի գծով բացահայտումներ: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Հիմնադրամը չի ակնկալում, որ վերը նշված փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր և շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք	Բազմամյա տնկարկներ	Հողամասեր	Այլ հիմնական միջոցներ	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք										
Մնացորդ առ 01.01.2021թ.	86,607	-	108,144	26,695	47,978	-	13,031	22,390	-	304,845
Ավելացում	-	20,339	19,401	31,587	14,577	6,582	24,672	-	22,080	139,238
Տեղափոխում	-	11,718	-	-	-	-	-	-	(11,718)	-
Պակասեցում	-	-	(278)	-	-	-	-	-	-	(278)
Մնացորդ առ 31.12.2021թ.	**86,607**	**32,057**	**127,267**	**58,282**	**62,555**	**6,582**	**37,703**	**22,390**	**10,362**	**443,805**
Մնացորդ առ 01.01.2022թ.	86,607	32,057	127,267	58,282	62,555	6,582	37,703	22,390	10,362	443,805
Ավելացում	2,071	4,672	20,728	19,796	17,359	-	277,258	20,702	86,238	448,824
Տեղափոխում	93,900	-	-	-	-	-	-	-	(93,900)	-
Պակասեցում	-		(93)	(19,723)	(868)	-	-	-	-	(20,684)
Մնացորդ առ 31.12.2022թ.	**182,578**	**36,729**	**147,902**	**58,355**	**79,046**	**6,582**	**314,961**	**43,092**	**2,700**	**871,945**
Մաշվածություն										
Մնացորդ առ 01.01.2021թ.	4,388	-	69,495	18,816	33,681	-	-	17,168	-	143,548
Տարվա մաշվածություն	4,332	743	15,991	9,372	3,738	601	-	2,819	-	37,596
Պակասեցում	-	-	(262)	-	-	-	-	-	-	(262)
Մնացորդ առ 31.12.2021թ.	**8,720**	**743**	**85,224**	**28,188**	**37,419**	**601**	**-**	**19,987**	**-**	**180,882**
Մնացորդ առ 01.01.2022թ.	8,720	743	85,224	28,188	37,419	601	-	19,987	-	180,882
Տարվա մաշվածություն	5,163	4,147	18,357	11,405	5,116	823	-	5,820	-	50,831
Պակասեցում	-	-	(24)	(18,797)	(869)	-	-	-	-	(19,690)
Մնացորդ առ 31.12.2022թ.	**13,883**	**4,890**	**103,557**	**20,796**	**41,666**	**1,424**	**-**	**25,807**	**-**	**212,023**
Հաշվեկշռային արժեք										
Առ 31.12.2021թ.	**77,887**	**31,314**	**42,043**	**30,094**	**25,136**	**5,981**	**37,703**	**2,403**	**10,362**	**262,923**
Առ 31.12.2022թ.	**168,695**	**31,839**	**44,345**	**37,559**	**37,380**	**5,158**	**314,961**	**17,285**	**2,700**	**659,922**

31.12.2021թ. դրությամբ «Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ»-ի կազմում ներառված գումարներն ամբողջությամբ վերաբերում են Հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Պոռշյան, 5-րդ փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 1 բնակելի տուն հասցեում գտնվող «Սպիտակ տան» կապիտալ շինարարության աշխատանքների գծով կատարված ծախսումներին, որոնք ավարտվել և շահագործման են հանձնվել 2022 թվականի ընթացքում: 31.12.2022թ. դրությամբ նույն դասում ներառված գումարներն ամբողջությամբ վերաբերում են Հիմնադրամի կողմից կառուցվող գինու լաբորատորիայի ծախսումներին:

Հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների ձեռքբերման կամ կապիտալ շինարարության գծով էական պայմանագրային հանձնառություններ առկա չեն:

2022 թվականի ընթացքում Հիմնադրամը չի հայտնաբերել հիմնական միջոցների արժեզրկման դեպքեր:

31.12.2022թ. դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցների սեփականության իրավունքի սահմանափակումներ առկա չեն:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 75,098 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով 1,314 անուն (31.12.2021թ.՝ 66,841 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով 1,440 անուն) հիմնական միջոցներ հաշվառված են զրոյական արժեքով:

7. Պաշարներ

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Գինիներ	5,526	5,802
Վառելիք	1,744	1,472
Շինարարական նյութեր և պահեստամասեր	41,547	5,734
Այլ նյութեր	1,746	494
Ընդամենը	**50,563**	**13,502**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ: Պաշարների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ առկա չեն:

2022թ. ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմել է 141,401 հազար դրամ (2021թ.՝ 35,648 հազար դրամ): Պաշարները ներկայացվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Հաշվետու տարվա ընթացքում պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

8. Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Դեբիտորական պարտքեր գնորդների հետ պայմանագրերի գծով	5,718	15,526
Դեբիտորական պարտքեր ստացվելիք շնորհների գծով	14,745	3,428
Հետաձգված ծախսեր տրված ենթադրամաշնորհների գծով*	72,436	79,912
Տրված կանխավճարներ	521	269
Հարկերի գծով ակտիվներ	27,797	4,392
Այլ ակտիվներ	-	28
Ընդամենը	**121,217**	**103,555**

* Այս տողում ներառված գումարներն իրենցից ներկայացնում են Եվրոպական Միության ֆինանսա-

վորմամբ իրականացվող «Սևծովյան տարածաշրջանը՝ որպես գինու տուրիզմի խթանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հիմնադրամի ենթադրամաշնորհառու հանդիսացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող (օտարերկրյա) թվով 3 կազմակերպություններին փոխանցված միջոցները, որոնց օգտագործման վերաբերյալ այդ կազմակերպությունների կողմից հաշվետու և համադրելի ամսաթվերի դրությամբ դեռևս չեն ներկայացվել ծախսման համապատասխան հաշվետվություններ՝ նկատի ունենալով դրամաշնորհային պայմանագրով ստանձնած հանձնառությամբ ամրագրված ծրագրի գործառնական փուլի իրականացման տևողությունն ու պարբերականությունը: Հաշվետու տարվա ընթացքում տրված ենթադրամաշնորհների գծով որպես ծախս ճանաչված գումարները ճանաչված են «Տրված ենթադրամաշնորհների գծով ծախսեր»-ի կազմում (տե՛ս Ծնթ. 15):

Դերիտորական պարտքերի հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Հիմնադրամի ենթարկվածությունը բացահայտված է Ծնթ. 20-ում:

9. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

9.1 Դրամական միջոցներ

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ընթացիկ հաշիվ՝ ՀՀ դրամով	29,595	72,075
Ընթացիկ հաշիվ՝ արտարժույթով	106,303	493,119
Դրամարկղ՝ ՀՀ դրամով	325	587
Ընդամենը	**136,223**	**565,781**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում առկա չէ:

Դրամական միջոցների հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Հիմնադրամի ենթարկվածությունը բացահայտված է Ծնթ. 20-ում:

9.2 Ոչ դրամային գործարքներ

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ոչ դրամային գործարքներ՝ կապված ներդրումային գործունեության հետ	**24,485**	**802**
Հիմնական միջոցների՝ որպես նվիրաբերություն ստացում	24,485	-
Հիմնական միջոցների՝ որպես շնորհ ստացում	-	802

10. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**94,087**	**38,449**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	11,412	802
Վերադասակարգում դեպի եկամուտներին վերաբերող շնորհներ	-	(1,790)
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհներից	79,956	83,627
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(36,126)	(27,001)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**149,329**	**94,087**

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**158,249**	**257,336**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	586,501	441,441
Վերադասակարգում դեպի ակտիվներին վերաբերող շնորհներ	(79,956)	(83,627)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներից	-	1,790
Ստացման ենթակա շնորհներ	10,348	3,976
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(550,634)	(462,667)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**124,508**	**158,249**

11. Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	1,436	4,935
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և կառուցման գծով կրեդիտորական պարտքեր	5,014	8,143
Պարտավորություններ հարկերի և պարտադիր վճարների գծով	202	235
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	16,652	18,086
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	-	18
Ընդամենը	**23,304**	**31,417**

12. Հասույթ

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր	24,672	55,379
Խորհրդատվական ծառայություններ (WineTour Guide)	13,214	16,753
Գինու լաբորատոր փորձաքննությունների անցկացում իրավաբանական և ֆիզիկական անձանց համար	13,691	9,443
Գինու գրոսավարների վերապատրաստման դասընթաց	1,667	-
Լաբորատոր և խորհրդատվական ծառայություններ	-	3,611
Ագրոտեխնոլոգիական ստարտափների մրցույթի կազմակերպում	8,980	6,571
Գյուղատնտեսական տվյալների, ծրագրի զարգացման և կառավարման / մոնիթորինգի կազմակերպման ուսուցման խորհրդատվություն	-	4,782
Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացման ծրագիր	44,271	-
25 ագրոբիզնեսի/ֆերմերների վերապատրաստում և բիզնես պլանների մշակման աջակցություն	11,324	-
Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպման կանոնակարգերի պահպանման առանձնահատկությունների հետազոտություն	14,940	-
Կանաչ և օրգանական ագրոտեխնոլոգիաները ջերմոցային տնտեսության կառավարման մեջ դասընթացների կազմակերպում	7,536	-
SS հմտությունների զարգացման վերաբերյալ ուսուցումների կազմակերպման խորհրդատվություն	-	4,647
Գյուղատնտեսության ոլորտում ջերմոցային գազերի ազդեցության հետազոտություն	-	3,308
Հողի և կենսաբազմազանության հետազոտություն	-	2,199

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր	-	1,257
Դասընթացների կազմակերպում իրավաբանական և ֆիզիկական անձանց համար	6,890	24,714
Այլ	1,370	601
Ընդամենը	**148,555**	**133,265**

Գնորդների հետ պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի գծով ստացվելիք գումարների և պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ:

Հազար դրամ	Ծնթ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
Առևտրական դեբիտորական պարտքերում ներառված ստացվելիք (անվերապահ ստացման ենթակա) գումարներ	8	5,718	15,526
Գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվներ՝ չներառված առևտրական դեբիտորական պարտքերում		-	2,248
Գնորդների հետ պայմանագրերի գծով պարտավորություն (ստացված կանխավճարներ)		7,067	5,572

Հաշվետու և համադրելի ժամանակաշրջանների վերջի դրությամբ գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների և գնորդների հետ պայմանագրերի գծով պարտավորությունների կազմում ներառված գումարներն հիմնականում վերաբերում են միմյանցից ամբողջությամբ տարբերվող (տարբեր պայմանագրերին վերաբերող) և առարկայական տարբեր ծրագրեր պարունակող կրթական ծառայությունների մատուցման գործարքներին, որոնք սովորաբար ունեն երկարաժամկետ (1 տարուց ավելի) բնույթ, սակայն առկա են նաև այնպիսի ծառայություններ, որոնց մատուցման ժամանակահատվածը շատ ավելի կարճ է:

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում գնորդների հետ պայմանագրերի գծով պարտավորությունների կազմում ճանաչված գումարներից 2,000 հազար դրամը հաշվետու ժամանակահատվածում ճանաչվել է որպես հասույթ՝ ներառվելով «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպման կանոնակարգերի պահպանման առանձնահատկությունների հետազոտություն տողային հոդվածում», իսկ 1,980 հազար դրամը՝ «Դասընթացների կազմակերպում իրավաբանական և ֆիզիկական անձանց համար» տողային հոդվածում:

Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հիմնադրամի սովորական գործունեության հասույթ բերող հիմնական ուղղությունները, դրանց գծով կատարման պարտականությունները և հասույթի ճանաչման պահերը (որպես հասույթի ճանաչման քաղաքականության առանցքային մաս) նկարագրված են ստորև.

Հասույթ բերող գործունեության հիմնական ուղղությունը	Կատարման պարտականությունը (ԿՊ)	ԿՊ-ի բավարարման ուղղությամբ առաջընթացի չափման/գնահատման մեթոդը	Հասույթի ճանաչման պահը
Հետազոտությունների և մշակումների իրականացման աշխատանքներ	Պայմանավորված հետազոտության և մշակման արդյունքների տրամադրումը	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է
Գինու լաբորատոր փորձաքննությունների անցկացում	Պայմանավորված փորձաքննության արդյունքների տրամադրումը	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է

Հասույթ բերող գործունեության հիմնական ուղղությունը	Կատարման պարտականությունը (ԿՊ)	ԿՊ-ի բավարարման ուղղությամբ առաջընթացի չափման/գնահատման մեթոդը	Հասույթի ճանաչման պահը
Դասընթացների կազմակերպում և իրականացում	Ուսումնական ծրագրերին համապատասխան՝ սահմանված ժամանակացույցով դասընթացների անցկացումը համապատասխան որակավորում ունեցող դասընթացավարների կողմից, ներառյալ ուսումնական նյութերի տրամադրումը, քննությունների անցկացումը, սերտիֆիկացումը	Դասընթացի նախատեսված տևողության ընթացքում՝ ժամանակային համամասնությամբ՝ պայմանավորված կա՛մ դասընթացի շրջափուլերի (ուսումնական շրջանների) տեսակարար կշիռներով կամ օրացուցային օրերի կտրվածքով	1. Սովորաբար՝ ժամանակի ընթացքում ուսումնական շրջափուլի միջոցով որոշված չափով կամ գծային հիմունքով, 2. Առանձին դեպքերում՝ այն ժամանակ, երբ Հիմնադրամն այլևս չունի պարտավորություն վերադարձնելու ստացված հատուցումը և չունի կատարվելիք ԿՊ:
Գյուղատնտեսական, կրթական, գիտական, փորձարարական և այլ համանման բնույթի խորհրդատվական ծառայությունների մատուցում	Խորհրդատվական ծառայությունների տվյալ տեսակին ներհատուկ գործողությունների իրականացումը (փոխանցումը)	Ծառայության բնույթով պայմանավորված՝ ժամանակային համամասնությամբ	1. Սովորաբար՝ ժամանակի ընթացքում գծային հիմունքով, 2. Առանձին դեպքերում՝ այն ժամանակ, երբ Հիմնադրամն այլևս չունի պարտավորություն վերադարձնելու ստացված հատուցումը և չունի կատարման ենթակա ԿՊ:

13. Նվիրաբերությունից եկամուտ

Այս հոդվածում ներառված գումարներն ամբողջությամբ իրենցից ներկայացնում են Հիմնադրամի կանոնադրական/գործառնական նպատակների իրականացման համար ՀՀ և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանցից անհատույց և առանց որևէ կոնկրետ պայմանի ստացված դրամական միջոցներ և այլ գույք, ինչպես նաև Հիմնադրամի գործառնական գործունեության ընթացքում առաջացած պարտավորությունների մարմանն ուղղված անհատույց միջոցներ:

14. Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր

Այս հոդվածում ներառված գումարներից 103,747 հազար դրամն իրենից ներկայացնում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) ֆինանսավորմամբ իրականացվող "AGRI CAMP" դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կողմից գնված և հայաստանյան գյուղացիական ֆերմերներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող այլ սուբյեկտներին փոխանցված գույքի (գյուղատնտեսական տեխնիկայի, սարքավորումների և այլ), ինչպես նաև վերջինների կողմից նույն նպատակային նշանակությամբ գույքի ձեռքբերման նպատակով Հիմնադրամի համաֆինանսավորած միջոցների գծով ծախսերը:

15. Տրված ենթադրամաշնորհների գծով ծախսեր

Այս հոդվածում ներառված գումարներն ամբողջությամբ իրենցից ներկայացնում են Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացվող «Սևծովյան տարածաշրջանը՝ որպես գինու տուրիզմի խթանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հիմնադրամի ենթադրամաշնորհառու հանդիսացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող (օտարերկրյա) թվով 3 կազմակերպություններին փոխանցված միջոցների հաշվին այդ կազմակերպությունների կողմից կատարված ծախսերը: Հիմնադրամի կողմից ենթադրամաշնորհառու հանդիսացող կազմակերպություններին փոխանցված, սակայն վերջինների կողմից դեռևս չօգտագործված և ծախսման համապատասխան հաշվետվություններ

չներկայացված գումարների գծով մնացորդները բացահայտված են Ծնթ. 8-ում:

16. Գրասենյակային և այլ վարչական ծախսեր

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Նյութական և գրենական ծախսեր	15,197	14,179
Մրցույթների գծով ծախսեր	-	6,216
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,617	2,985
Տեսահոլովակների, տեսաֆիլմերի նկարահանման և մշակման ծախսեր	320	1,700
Կարճաժամկետ վարձակալությունների գծով ծախսեր	2,461	874
Կայքերի պատրաստման և շահագործման ծախսեր	-	399
Այլ	6,774	5,955
Ընդամենը	**26,369**	**32,308**

17. Այլ ծախսեր

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Դասընթացների և վերապատրաստումների կազմակերպման ծախսեր	13,115	4,197
Նվիրատվություն և աջակցություն ՀԱԱՀ-ին	-	64,850
Տպագրական ծախսեր	4,004	10,308
Վերանորոգման և շինարարական ծախսեր	5,547	6,840
Գյուղատնտեսական նյութերի, քիմիկատների և այլ փորձաքննական պարագաների գծով ծախսեր	616	2,756
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	9,516	8,926
Պահնորդական ծառայությունների գծով ծախսեր	2,184	-
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	8,168	3,750
Ֆիզիկական անձանց տրված դրամաշնորհների գծով ծախսեր	5,835	690
Այլ	8,010	6,110
Ընդամենը	**56,995**	**108,427**

18. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	6,712	2,992
	6,712	**2,992**

Հիմնադրամի համար կիրառվող շահութահարկի դրույքաչափը 18% է (2021թ.՝ 18%):

Շահութահարկի փաստացի (արդյունքային) տոկոսադրույքի համապատասխանեցում.

Հազար դրամ	2022թ.	%	2021թ.	%
Շահույթ՝ նախքան հարկումը	5,726		418,474	
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքաչափով	1,031	18.0	75,325	18.0
Զուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	5,681	99.2	(72,333)	(17.3)
	6,712	**117.2**	**2,992**	**0.7**

19. Կապակցված կողմերի հետ գործարքներ

19.1 Վերահսկողության փոխհարաբերություն

Հիմնադրամը որևէ կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից չի վերահսկվում: Հիմնադրամի

կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի Խորհուրդն է (տե՛ս Ծնթ. 1):

19.2 Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումներ

Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Աշխատակիցների հատուցումներ	28,018	18,119

19.3 Կապակցված կողմերի հետ այլ գործարքներ

	Գործարքի գումար		Չմարված մնացորդ	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Հիմնադրամի Խորհրդի անդամների հետ՝				
Փորձագիտական ծառայությունների ստացում	-	3,388	-	-
Հիմնադրամի տնօրենի հետ՝				
Փորձագիտական ծառայությունների ստացում	1,300	2,409	-	-
Ապրանքների ձեռքբերում	-	49	-	-

20. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությունները

20.1 Ընդհանուր ակնարկ

Հիմնադրամը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Հիմնադրամի ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Հիմնադրամի նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման ռազմավարության ու ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է Հիմնադրամի ղեկավարությունը:

Հիմնադրամը, վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

20.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարմամբ, Հիմնադրամի համար կառաջացնի ֆինանսական կորուստ:

Ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք 31.12.2022թ.	31.12.2021թ.
Դեբիտորական պարտքեր (Ծնթ. 8)	20,463	18,954
Դրամական միջոցներ (Ծնթ. 9)	135,898	565,194
Գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվներ (Ծնթ. 12)	-	2,248
	156,361	**586,396**

20.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Հիմնադրամի մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Հիմնադրամը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

20.4 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսին են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, կազդեն Հիմնադրամի շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է. շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժութային ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժութային ռիսկին ենթարկվածությունները Հիմնադրամը չի կառավարում:

31.12.2022թ. դրությամբ Հիմնադրամի արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և դրամային պարտավորությունները հետևյալն են՝ արտահայտված համապատասխան արժույթներով.

Հազար դրամ	31.12.2022թ.		31.12.2021թ.	
Ֆինանսական ակտիվ/(ֆինանսական պարտավորություն)	USD	EUR	USD	EUR
Դեբիտորական պարտքեր	-	14,755	-	5,193
Դրամական միջոցներ	41,692	64,611	420,106	73,012
Արտարժութային զուտ ենթարկվածություն	**41,692**	**79,366**	**420,106**	**78,205**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթ հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում: Արտարժութային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

Հազար դրամ	31.12.2022թ.		31.12.2021թ.	
	Շահույթի վրա ազդեցություն	**Սեփական կապիտալի վրա ազդեցություն**	**Շահույթի վրա ազդեցություն**	**Սեփական կապիտալի վրա ազդեցություն**
USD ուժեղացում 10%-ով	4,169	4,169	42,011	42,011
EUR ուժեղացում 10%-ով	7,937	7,937	7,821	7,821

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Հիմնադրամն ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Հիմնադրամի համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

21. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվում են՝ դրանցից առաջացող բոլոր դրամական ներհոսքերն ու արտահոսքերը համապատասխան շուկայական տոկոսադրույքներով զեղչելու միջոցով:

Ղեկավարության կարծիքով, ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

22. Պայմանական դեպքեր

22.1 Դատական գործեր

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ Հիմնադրամի դեմ կամ Հիմնադրամի կողմից ներկայացված դատական հայցեր չեն եղել, Հիմնադրամը ներգրավված չի եղել որևէ դատավեճի մեջ, որևէ այլ դատական գործով չի հանդիսացել տուժող կամ երրորդ անձ, որպիսի պարագայում Հիմնադրամի հանդեպ կարող են առաջադրվել պայմանական պարտավորություններ, լրացուցիչ հնարավոր ծախսեր կամ Հիմնադրամի համար առաջացնել լրացուցիչ հնարավոր եկամուտներ:

22.2 Երաշխավորություններ

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ Հիմնադրամը տրամադրած կամ ստացված երաշխավորություններ չի ունեցել:

22.3 Ապահովագրություն

Հիմնադրամն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

22.4 Հարկային օրենսդրության անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական պարբերաբար փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ առնվազն տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Հիմնադրամի հարկային հաշվարկները, հաշվետվություններն ու հայտարարագրերը և իրավունք ունեն առաջադրելու լրացուցիչ

հարկային պարտավորություններ, ինչպես նաև նշանակելու տույժեր ու տուգանքներ:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Հիմնադրամի ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե հարկային մարմինները կարողանան հիմնավորել ու պարտադրել իրենց մեկնաբանություններն ու տեսակետները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

30 հունիսի 2023թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2023 18:38